ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1964 Общественные науки

Մ. Հ. Անտոնյան

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆԻ ԴԵՐԸ ՆՈՐ ՄԱՐԴՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

I

Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կոմունիզմի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում լուծում է եռամիասնական խնդիր՝ ա) կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, բ) կոմունիստական հասարակական հարաբերությունների ձևավորումը և գ) կոմունիստական հասարակարգի քաղաքացու՝ նոր մարդու ձևավորումը։

Այս եռամիասնական խնդրի լուծումը մեծ, բարդ և որակապես նոր գործ է, որի նմանը չի իմացել և չէր կարող իմանալ անցյալի ամբողջ հասարակական պատմությունը։ Հիշյալ խնդիրները լուծվում են միաժամանակ, նրանք փոխադարձ բեղմնավոր ազդեցություն են գործում։ Եթե օբյեկտիվ պայմանների փոփոխությունները կազմում են մարդկանց գիտակցության ու կազմակերպվածության փոփոխության հիմքը, ապա կոմունիստական գաղափարայնության, մասսաների գիտակցականության և ակտիվության աճն իր հերթին հանդիսանում է հասարակության տնտեսական առաջադիմության անհրաժեշտ պայմանը։ Սա նշանակում է, որ կոմունիզմին անցում կատարելու համար պահանջվում է սուբյեկտիվ գործոնի բոլոր տարրերի, բոլոր բաղադրամասերի լիակատար հասունություն։ Այդ պրոբլեմն, ըստ էության, նոր մարդու ձևավորման պրոբլեմն է։

Բուրժուական սոցիոլոգները, փիլիսոփաները, քաղաքական գործիչները պնդում են, թե մարդու էությունը մշտական է, թե մարդիկ օժտված են «անփոփոխ» հատկություններով, որոնց թվին իբր պատկանում են հարստանալու ծարավը, մասնավոր սեփականություն ձեռք բերելու տենչը, կովարարությունը, եսասիրությունը, բարոյական սանձարձակությունը և այլն։ Այս և նման հատկությունները իբր հավասարապես հատուկ են աշխարհի բոլոր ժողովուրդներին և ազգերին՝ պատմության բոլոր դարաշրջաններում։ Ըստ այս տեսակետի, որը խիստ հակապատմական և մետաֆիզիկական է, մարդիկ բացարձակապես ազատ են հասարակական ամեն տեսակ կապերից ու հարաբերություններից, սոցիալական փոփոխություններից։

Օրինակ, Դավիդ Հյումը գրել է, թե «բոլոր ազգերի և դարաշրջանների մարդկանց վարվելակերպը խիստ միատեսակ է և մարդկային էությունը մնայուն է իր բոլոր սկզբունքներով ու դրսևորումներով»[1]։

Նույնպիսի հակագիտական, հակապատմական տեսակետ են պաշտպանում նաև ժամանակակից բուրժուական սոցիոլոգները, քաղաքական ու պետական գործիչները։ Իմպերիալիզմի ժամանակակից գաղափարախոսների ընդհանուր կարծիքը լավ է արտահայտել էկզիստենցիալիստ Գաբրիել Մարսելը,

[1] Д. Юм, Исследования человеческого разумения. СПБ, 1902, стр. 92.

որը գրել է. «Բացահայտ հակասություն կլիներ կարծել, թե մասսաների դաստիարակությունը հնարավոր է»։

Հակակոմունիզմի ներկայացուցիչները առանձնապես անամոթաբար զբաղարտում են սոցիալիստական կարգը։ Նրանք ճգնում են ապացուցել, թե նոր մարդու ձևավորման վերաբերյալ ՍՄԿՊ Ծրագրում առաջադրված խնդիրը իրը կենսագործելի չէ։ Նեոֆրեյդիստ Օդրեոնը, խոսելով առհասարակ մարդու էության մասին, հանգում է այն եզրակացության, թե այն «քիչ է փոխվել նախապատմական ժամանակներից ի վեր»[2]։

Մարդու էության անփոփոխության մասին բուրժուական փիլիսոփաների և սոցիոլոգների պնդումների գիտականորեն անհիմն լինելն այնքան ակներև է, որ բուրժուական աշխարհի շատ մտածողներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, որոնք ավելի կամ պակաս չափով օբյեկտիվորեն են վերաբերվում հասարակական օրինաչափությունների պրոբլեմներին, անվերապահորեն մերժում են այս անհեթեթ փիլիսոփայությունը։

Ամերիկյան առաջադեմ հրապարակախոս Ալբերտ Կանը գրել է. «Այսօր այն հարցը, թե արդյոք կարելի է փոխել մարդու էությունը, այլևս վեճի առարկա չէ։ Ինքը կյանքն անվիճելի պատասխան է տվել այդ հարցին։ Քանի որ նրանք, ովքեր կույր չեն, հստակորեն ու պարզ կերպով տեսնում են, որ այն, ինչ երկար ժամանակ անվանվում էր «մարդու էություն», փոխվել է Սովետական Միությունում։ Այս երկրում հասարակության վերափոխման պրոցեսում մարդը փոխում է ինքն իրեն։ Նոր տիպի մարդն է այժմ քայլում աշխարհով...»[3]։

Սոցիալիզմը, որը ստեղծել է նոր մարդ, չէր կարող վերջնականորեն լուծել անհատի բազմակողմանի զարգացման խնդիրը։ Որակապես նոր այս խնդիրը օբյեկտիվ անհրաժեշտությամբ մեր հասարակության առջև ծառացավ կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում։

«Կոմունիզմին անցնելը ենթադրում է,—շեշտված է ՍՄԿՊ Ծրագրում,—դաստիարակել ու պատրաստել կոմունիստորեն գիտակից և բարձր կրթված մարդիկ, որոնք ընդունակ են ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատանքի, ակտիվ գործունեության՝ հասարակական և պետական կյանքի տարբեր բնագավառներում, գիտության և կուլտուրայի բնագավառում»[4]։

Նոր մարդու ձևավորման օբյեկտիվ անհրաժեշտությունը բխում է արտադրողական ուժերի և հասարակական կյանքի բոլոր մյուս կողմերի կոմունիստական վերափոխման պահանջմունքներից։ Մյուս կողմից, կոմունիստական շինարարության հաջողություններն ինքնին հանդես են գալիս որպես նոր մարդու ձևավորման վճռական, օբյեկտիվ հիմք։ Այլ կերպ ասած, հասարակական կեցության փոփոխությունը օրինաչափորեն տանում է դեպի հենց իրենց՝ մարդկանց, նոր օբյեկտիվ պայմաններ կերտողների փոփոխությունը։

ՍՄԿՊ Ծրագրում ընդգծվում է, որ հասարակական կազմակերպության կոմունիստական ձևերի ստեղծման ընթացքում, մարդու համար, նրա աշխատանքի, կենցաղի, կրթության, կուլտուրական աճի համար, առավել նպաստավոր պայմանների ստեղծման ընթացքում ավելի ու ավելի մեծ չափով և հաստատուն կերպով կոմունիստական գաղափարայնությունը կտիրապետի

---

[2] Цитата по книге: Г. Беккер и А. Босков, Современная социологическая теория, ИЛ, 1961, стр. 653.

[3] «Правда» от 22 марта 1960 г.

[4] ՍՄԿՊ Ծրագիրը, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 147—148։

մարդկանց կյանքում, աշխատանքում, հարաբերությունների մեջ, կմշակվի կոմունիզմի բարիքներից գիտակցաբար ու բանականորեն օգտվելու կարողությունը։ Հետևաբար, մարդկանց բազմակողմանի էության արմատական վերափոխումը կոմունիզմի կառուցման օրինաչափ արդյունքն է։

Ասվածից չի հետևում, թե նոր մարդու ձևավորումը ավտոմատիկ բնույթ ունի, տեղի է ունենում ինքնաբերաբար՝ առանց սուբյեկտիվ գործոնի մասնակցության։ Կոմունիստական շինարարության ոչ մի բնագավառում այնքան մեծ չէ սուբյեկտիվ գործոնի նշանակությունը, որքան ապագայի մարդու, կոմունիստական հասարակության մարդու ձևավորման պրոցեսում։ Առանց այդ գործոնի նոր մարդու դաստիարակման օբյեկտիվ անհրաժեշտությունը չի կարող իրականացվել։

Սուբյեկտիվ գործոնի դերը ամենից առաջ այն է, որ ի դեմս կոմունիստական կուսակցության այն կանխորոշում է ապագայի մարդու դաստիարակության հիմնական, առավել վճռական ուղղությունները, ձևերն ու մեթոդները, որոնք բխում են կոմունիստական շինարարության տվյալ ժամանակաշրջանի կոնկրետ պայմաններից։ Ներկայումս դրանց թվին են պատկանում գիտական աշխարհայացքի ձևավորումը, մարդկանց աշխատանքային դաստիարակությունը, կոմունիստական բարոյականության արմատավորումը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական հայրենասիրության զարգացումը, մարդկային անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ կապիտալիզմի մնացուկների վերջնական հաղթահարումը, բուրժուական գաղափարախոսության մերկացումը։

Նոր մարդու դաստիարակության այս բոլոր ձևերից ու մեթոդներից մենք առանձնացնում ենք միայն մի քանիսը, հատկապես առաջին երեքը։

2

Մեծ է սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը բոլոր սովետական մարդկանց գիտական աշխարհայացքի ձևավորման վրա։ Դա առաջնահերթ կարևորություն ունեցող խնդիր է։ Այդ խնդրի լուծումը նշանակում է ամբողջ բնակչությանը դաստիարակել գիտական կոմունիզմի ոգով։ Այդպիսի դաստիարակության նպատակն այն է, որ «աշխատավորները խորապես ըմբռնեն համաշխարհային զարգացման ընթացքն ու հեռանկարները, ճիշտ հասկանան երկրի ներքին և միջազգային ասպարեզի իրադարձությունները, գիտակցաբար կառուցեն կյանքը կոմունիստական ձևով։ Յուրաքանչյուր մարդու վարքագծում, յուրաքանչյուր կոլեկտիվի և յուրաքանչյուր կազմակերպության գործունեության մեջ կոմունիստական գաղափարները պետք է օրգանապես զուգորդվեն կոմունիստական գործերի հետ»[3]։

Կուսակցության Ծրագրի այս դրույթը բացահայտում է մարքս-լենինյան, կոմունիստական աշխարհայացքի գիտական նշանակությունը և սոցիալ-քաղաքական նպատակները։ Ի տարբերություն ծայրահեղ ռեակցիոն, բուրժուական աշխարհայացքի, որի բնորոշ գծերն են հակագիտականությունը և միստիկան, հակակոմունիզմի, անհատապաշտության և նսեմությունի քարոզը, կոմունիստական աշխարհայացքը դիալեկտիկա-մատերիալիստական, միակ գիտական հայացքն է բնության, հասարակության և մարդկային մտածողության նկատմամբ, կոմունիզմի կառուցման օրինաչափությունների նկատմամբ։ Այդ աշ-

3 ՍՄԿՊ Ծրագիրը, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 141—142։

խարհայացքը միակ հաստատ հոգևոր զենքն է, որի օգնությամբ սովետական մարդիկ պատրաստվում են ապրելու կոմունիստական հասարակարգում, ճանաչում հասարակության ցածր աստիճանից բարձրագույնին անցնելու օրինաչափությունները։

Մարքսիստական աշխարհայացքի մեջ օրգանապես միակցվում են մարքսիզմի երեք բաղկացուցիչ մասերը՝ փիլիսոփայությունը, տնտեսական ուսմունքը և գիտական կոմունիզմի տեսությունը։ Տիրապետել այդ աշխարհայացքին՝ կնշանակի յուրացնել հիշյալ երեք բաղկացուցիչ մասերի հիմնական գաղափարները։

Այդ գաղափարների յուրացման համար անհրաժեշտ են ոչ միայն օբյեկտիվ պայմանների, այլև սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը։ Այլ կերպ չի կարող իրականանալ մարդու ամբողջական ձևավորումը։

Ո՞րն է սուբյեկտիվ գործոնի, մարդու էության վրա նրա բազմակողմանի ներգործության դերը։

Ամենից առաջ կուսակցության և սոցիալիստական պետության բազմակողմանի գործունեության դերն է։ Կոմունիստական կուսակցությունը և սոցիալիստական պետությունը ձգտում են է՛լ ավելի զարգացնել և փոխել մարդու սոցիալական էությունը՝ որպես մարդկանց գիտակցության մեջ կոմունիստական աշխարհայացքի արմատավորման և ամրապնդման կարևորագույն պայման։

Մարդու սոցիալական էության զարգացում և փոփոխություն ասելով մենք նկատի ունենք այն ամենը, ինչ կապված է մարդու հասարակական-քաղաքական գործունեության հետ։ Մարդկանց լավագույն հատկությունները, ունակությունները, հմտությունները ձևավորվում են ամենից առաջ նրանց բազմազան հասարակական-տնտեսական գործունեության պրոցեսում։ Այդ հասարակական-քաղաքական գործունեությունն առաջին հերթին ծավալվում է այնպիսի մասսայական-հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք են արհմիությունները, կոմերիտմիությունը, կոոպերատիվները, կուլտուր-լուսավորական միավորումները, մշտական գործող արտադրական խորհրդակցությունները, աշխատավորների դեպուտատների սովետները և նրանց մշտական հանձնաժողովները, ժողովրդական մասսաներին հասարակության կառավարման գործում լայնորեն ներգրավելու մյուս բազմաթիվ միջոցները։

Կուսակցության նոր Ծրագիրը խնդիր է դնում բոլոր քաղաքացիներին անխտիր ներգրավել հասարակության կառավարման գործում։ Այդ խնդիրն իրականացվում է՝

«Նախ, յուրաքանչյուր աշխատավոր մարդու կյանքի ավելի ու ավելի լավ նյութական և կուլտուրական պայմաններ ստեղծելու միջոցով։

Երկրորդ, ժողովրդական ներկայացուցչության ձևերը և սովետական ընտրական սիստեմի դեմոկրատական սկզբունքները կատարելագործելու միջոցով։

Երրորդ, կոմունիստական շինարարության առավել խոշոր հարցերի և սովետական պետության օրինագծերի համաժողովրդական քննարկման պրակտիկան ընդլայնելու միջոցով։

Չորրորդ, իշխանության ու կառավարման օրգանների գործունեության նկատմամբ ժողովրդական վերահսկողության ձևերն ամեն կերպ ընդլայնելու և իշխանության ներգործությունը բարձրացնելու միջոցով։

Հինգերորդ, ղեկավար օրգանների կազմը սիստեմատիկաբար նորացնելու, ղեկավար աշխատողների ընտրության և հաշվետու լինելու սկզբունքը պետական ապարատում և հասարակական կազմակերպություններում ավելի ու ավելի հետևողականորեն իրականացնելու, այդ սկզբունքը պետական ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև կուլտուրայի հիմնարկների բոլոր ղեկավար աշխատողների վրա աստիճանաբար տարածելու միջոցով»[6]։

Մարդու սոցիալական էության ձևավորման և մարդկանց գիտակցության մեջ գիտական, մարքսիստական աշխարհայացքի արմատավորման կարևորագույն միջոցներից մեկը պետության կուլտուր-դաստիարակչական աշխատանքն է, աշխատավորների, առանձնապես աճող սերնդի ուսուցման լայն կազմակերպումը։

Միայն միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են 20 մլն. պատանիներ ու աղջիկներ, որոնք բնական ու հասարակական գիտությունների ուսումնասիրության հիման վրա ձևավորում են իրենց գիտական աշխարհայացքը։ Մենք արդեն չենք խոսում սովետական բազմամիլիոն մարդկանց հանրակրթական և կուլտուր-տեխնիկական պատրաստականության բարձրացման շատ ուրիշ ձևերի մասին։

Ժողովրդական մասսաների գիտակցության մեջ կոմունիստական աշխարհայացքի արմատավորման համար կարևոր տեղ է գրավում պարտիական լուսավորության սիստեմը, որտեղ ընդգրկված մարդկանց թիվը տարեցտարի ավելանում է։ Բավական է բերել այսպիսի համեմատական տվյալներ. 1958—1959 ուսումնական տարում քաղաքական ինքնակրթության զանազան ձևերում ընդգրկված էր 6,7 մլն. մարդ, 1961—1962 ուսումնական տարում դրանց թիվը կազմեց 22,5 մլն. մարդ, այդ թվում 15,5 մլն. անպարտիական աշխատավորներ։

Այսպիսով, կուսակցությունը և սոցիալիստական պետությունը, աշխատավորների բոլոր հասարակական կազմակերպություններն ու միավորումները զանազան միջոցներով և ճանապարհներով պլանաչափ կերպով և կազմակերպորեն պայմաններ են ստեղծում մասսաների մեջ կոմունիստական աշխարհայացքի հաջող արմատավորման համար։

ՍՄԿՊ XXII համագումարը, ՍՄԿՊ Կենտկոմի 1963 թ. հունիսյան պլենումը նոր փուլ նշանավորեցին աշխատավորների գիտակցության մեջ կոմունիզմի գաղափարների արմատավորման ուղղությամբ գաղափարական աշխատանքի հետագա ուժեղացման ասպարեզում։ Համագումարի և պլենումի որոշումներում առանձին ուժով ընդգծվում է, որ կոմունիստական աշխարհայացքի ձևավորումը չի սահմանափակվում միայն մարքսիզմ-լենինիզմի գիտական տեսության ուսումնասիրմամբ։ Եթե տեսության ուսումնասիրումը կապված չէ կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ, ապա չի կարող իրականացվել կոմունիստական աշխարհայացքի հաջող ձևավորումը և առհասարակ մարդու բազմակողմանի զարգացումը։ Աշխատանքային գործունեության հետ կոմունիստական գաղափարների օրգանական կապը մարդկանց գաղափարական համոզվածության ձևավորման ամենից հաստատ ուղին է։

---

6 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», էջ 245—246։

3

Մարդկանց գաղափարական համոզվածությունը, նրանց մյուս բոլոր ազնիվ հատկությունները դրսևորվում են ամենից առաջ այն բանում, թե նրանք ինչպես են վերաբերվում աշխատանքին, ինչպես են պայքարում աշխատանքի արտադրողականության անընդհատ բարձրացման համար։ Եվ դա բնական է, որովհետև կոմունիզմը ամենից առաջ կանխորոշում է մարդկանց նոր վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ՝ որպես կենսական առաջին անհրաժեշտության։ Եվ աշխատանքի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը արտացոլում է նոր մարդու կարևորագույն հատկանշական գիծը։ Ուստի մարդկանց աշխատանքային դաստիարակությունը, աշխատանքի նկատմամբ սիրո և հարգանքի դաստիարակումը կազմում են կուսակցության, սովետների, արհմիությունների, կոմերիտմիության և այլ հասարակական կազմակերպությունների ամբողջ աշխատանքի էությունը, կորիզը։

ՍՄԿՊ Ծրագրում ասված է.

«Աշխատանքով է ստեղծվում այն ամենը, ինչը անհրաժեշտ է մարդկանց ապրելու և զարգանալու համար։ Ուստի, յուրաքանչյուր աշխատունակ մարդ պետք է մասնակցի այն միջոցների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են նրա կյանքի ու գործունեության համար, հասարակության բարօրության համար։ Այն մարդը, որը հասարակությունից որևէ բարիք ստանալով չի մասնակցում աշխատանքի, կլինի ձրիակեր և ուրիշի հաշվին ապրող»[7]։

Մենք չենք խոսի աշխատանքային դաստիարակության մասին առհասարակ, որովհետև դա հարցի լուսաբանման մեկ ուրիշ տեսանկյունն է։ Մեր խնդիրն է ցույց տալ աշխատանքային դաստիարակության վրա սուբյեկտիվ գործոնի ազդեցության մեխանիզմը։ Այդ ազդեցության բազմազան ձևերից մենք վերցնում ենք միայն մի քանիսը, առավել կարևորները։

Առաջին, մարդկանց աշխատանքային դաստիարակության վրա սուբյեկտիվ գործոնի հսկայական ազդեցությունը իրագործվում է նրանով, որ լայնորեն ցուցադրվում և համակողմանիորեն պրոպագանդվում է աշխատանքի նշանակությունը առհասարակ մարդկության պատմության մեջ և մասնավորապես կոմունիստական շինարարության ընթացքում։ Այս պրոբլեմը գտնվում է մեր մամուլի, կինոյի, թատրոնի, գրականության, մեր կուսակցության ու պետության ամբողջ գաղափարական աշխատանքի ուշադրության կենտրոնում։

Աշխատանքն ամեն մի հասարակության մեջ մարդկանց զարգացման պարտադիր և առաջնային պայմանն է։ Մարդկության ամբողջ պատմությունը «ոչ այլ ինչ է, քան եթե մարդկային աշխատանքի միջոցով մարդու ստեղծում»[8]։ Հայտնի է աշխատանքի դերի մեկ ուրիշ կլասիկ բնութագրություն, որ տվել է Էնգելսը։ Նա գրել է, որ աշխատանքը «մարդկային ամբողջ կյանքի առաջին հիմնական պայմանն է, և այն էլ այն աստիճան, որ մենք որոշ իմաստով պիտի ասենք՝ հենց աշխատանքն է ստեղծել մարդուն»[9]։

---

7 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 142։

8 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, стр. 598.

9 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 170։

Աշխատանքի դիալեկտիկա-մատերիալիստական գիտական ըմբռնումը, հասարակության պատմության մեջ նրա ունեցած նշանակությունը, այսինքն նյութական արտադրության ոլորտի ունեցած իսկական նշանակությունն առաջին անգամ բացահայտվեց և հիմնավորվեց մարքսիզմի կողմից։ Հասարակության կյանքում աշխատանքի դերի վերաբերյալ մարքսիստական ուսմունքը բացատրում է ոչ միայն խոր անցյալը, այլև ներկան։ Աշխատանքը հիմա էլ կազմում է հասարակության համակողմանի բարգավաճման հիմքերի հիմքը. այն հանդիսանում է կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման և նոր մարդու ձևավորման վճռական միջոցը։

Հանրօգուտ գործունեությունից դուրս գտնվող անհատի անտարբեր վերաբերմունքը հասարակության բախտի նկատմամբ նրան զրկում է իր ընդունակությունները դրսևորելու հնարավորությունից, ավելին, քայքայում, նսեմացնում է նրան թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, նրա կյանքը դարձնում աննպատակ, անուրախ, եսակենտրոն։ Հին հունական մտածող Պլուտարքոսը շատ դիպուկ կերպով նկատել է. «Ով չի աշխատում՝ կամենալով պահպանել իր ուժերը, նման է այն մարդուն, որը որոշել է լսել՝ կամենալով ուժեղացնել ու զարգացնել իր ձայնը»։

Կ. Մարքսը ընդգծել է, որ աշխատանքը մարդկանց նպատակադիր գործունեությունն է իրենց պահանջմունքների բավարարման համար բնության ուժերի օգտագործման ուղղությամբ։ Այդ գործունեության ընթացքում մարդը ոչ միայն դրսևորում է իր ընդունակությունները, այլև սովորում է կիրառել դրանք նպատակասլաց կերպով։ Ձևավորվում է մարդը որպես պատմության իսկական սուբյեկտ։

Մարքսի դիտողությունից հետևում է, իսկ կոմունիստական շինարարության փորձը նոր ուժով հաստատում, որ աշխատանքի պրոցեսը վճռում է երկմիասնական խնդիր. նախ՝ այն ապահովում է ամբողջ հասարակության առաջադիմության հիմքը կազմող նյութական արտադրության առաջադիմությունը, երկրորդ՝ աշխատանքի պրոցեսում փոփոխվում է ինքը մարդը, զարգանում են նրա ֆիզիկական և մտավոր ունակությունները, նրա ձիրքը, փորձը, հմտությունները, հոգեբանությունը, մեծանում է նրա իշխանությունը բնության նկատմամբ։

Այս երկմիասնական պրոցեսը հատկապես ցայտուն կերպով դրսևորվում է սոցիալիստական և կոմունիստական շինարարության ժամանակաշրջանում, երբ որակապես նոր բովանդակություն և նոր դեր է ստանում աշխատանքը հասարակության զարգացման մեջ, երբ աշխատանքն առաջին անգամ դառնում է ազատ, դառնում է աշխատանք հանուն իր իսկ կրողի՝ աշխատավոր մարդու երջանկության, նյութական ու հոգևոր բարիքներ կերտողի բարօրության։ Մեր շինարարության փորձը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ բնավորության, գիտակցության և հոգեբանության կոմունիստական գծերը ամենից առաջ ձևավորվում են հանրօգուտ աշխատանքում, կոմունիզմի համար մղվող պայքարի պրակտիկայում։ Վ. Ի. Լենինը ուսուցանում է, որ «միայն բանվորների և գյուղացիների հետ միասին կատարած աշխատանքով է, որ կարելի է իսկական կոմունիստ դառնալ»[10]։

Երկրորդ, մարդկանց աշխատանքային դաստիարակության վրա սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը իրականանում է աշխատանքային դաստիարա-

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, Հայպետհրատ, 1952, էջ 364։

կությունն ուժեղացնելու այն կազմակերպական միջոցառումների մեջ, որ կիրառում են կուսակցությունը և կառավարությունը։ Վերջին տարիներս այս ասպարեզում շատ բան է արված։ Վերակառուցվել են միջնակարգ դպրոցի բոլոր օղակները, որոնցում օրգանապես միահյուսվել են ուսուցումն ու աշխատանքը, ուսուցումն ու կոմունիստական շինարարության պրակտիկան։ Բացի այդ, վերակառուցվել է բարձրագույն դպրոցը։ Այդ վերակառուցման արդյունքը կրկին հանդիսանում է ուսանողի ուսման զուգորդումը ձեռնարկություններում, կոլտնտեսային ու սովխոզային դաշտերում, երկաթուղում և շինարարության մեջ աշխատանք կատարելու հետ։ Աշխատանքում, և ոչ միայն ուսման պրոցեսում, ձևավորվում են ուսանողի հայացքները, վարքագիծը, նրա վերաբերմունքը դեպի կոլեկտիվը, դեպի հասարակությունն ամբողջությամբ վերցված։

Երրորդ, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք դաստիարակելու համար սուբյեկտիվ գործոնի ունեցած նշանակության և ազդեցության մեխանիզմը դրսևորվում է այն բանում, որ կազմակերպվում ու լայնորեն ծավալվում է կոմունիստական աշխատանքի համար շարժումը, որը ներկայումս դարձել է համաժողովրդական երևույթ, արդիականության անհաղթահարելի ուժ։ Ընդ որում կուսակցությունը ելնում է այն բանից, որ աշխատանքային ոչ ամեն մի պրոցես է մարդու մեջ առաջ բերում կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը։ Ուստի սխալ է կարծել, թե աշխատանքային գործունեության մեջ մարդկանց ներգրավելու միջոցով միայն հնարավոր կլինի հասնել նրանց կոմունիստական գիտակցականության ձևավորման, հասարակական պարտքի նկատմամբ նրանց մեջ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակման։ Հանրօգուտ աշխատանքի օբյեկտիվ պրոցեսը իր հսկայական դաստիարակչական դերը կարող է խաղալ, եթե առկա է սուբյեկտիվ գործոնի միջամտությունը, եթե առկա է կուսակցության, պետական օրգանների և հասարակական բոլոր կազմակերպությունների գաղափարական բազմակողմանի, սիստեմատիկ, նպատակադիր դաստիարակչական աշխատանքը մասսաների մեջ։

Սուբյեկտիվ գործոնի այդ բոլոր կողմերի գործունեության մեջ գլխավորն այն է, որ աստիճանաբար ապահովվի կոմունիստական աշխատանքի հաղթանակը, այսինքն՝ անցումը սոցիալիստական աշխատանքից կոմունիստականին։ Այդ խնդիրը հնարավոր է կատարել ոչ թե կոմունիստական աշխատանքի վերաբերյալ ընդհանուր կոչերով, այլ կոմունիստական աշխատանքի շարժման մասնակիցների առաջավոր փորձի նպատակասլաց տարածմամբ։ Կուսակցությունը, բոլոր հասարակական կազմակերպությունները ձգտում են հասնել այն բանին, որ դրական օրինակի ուժն իր մասսայական ներգործությունն ունենա աշխատավորական լայն խավերի վրա։ Ամենուրեք լոզունգ է տարածվում՝ «Առաջավորների կողքին չպետք է լինեն ետ մնացողներ»։ Հասկանալի է, որ այդ լոզունգը չի կարող իրականանալ տարերայնորեն։ Սուբյեկտիվ գործոնն այստեղ կոչված է մարդկանց կազմակերպելու անձնվեր աշխատանքի համար հանուն արտադրական պլանների կատարման ու գերակատարման, մարդկանց կազմակերպելու այն բանի համար, որպեսզի օգտագործվեն բոլոր հնարավորություններն ու ռեզերվները՝ նյութական ու հոգևոր բարիքների արտադրության ավելացման նպատակով։

Չորրորդ, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակության վրա սուբյեկտիվ գործոնի ազդեցությունն ապահովվում

է ազատ ժամանակի աստիճանական ավելացմամբ, հետևաբար, աշխատանքային ժամանակի, այսինքն՝ արտադրության մեջ եղած աշխատանքի ժամանակի տևողության կրճատմամբ։

Աշխատանքային ժամանակի կրճատման գործում հաշվի են առնվում երկու գլխավոր հանգամանք. ա) այդ կրճատումը մեխանիկական հասարակ գործ չէ. այն իրականացվում է աշխատանքի արտադրողականության սիստեմատիկ բարձրացման հիման վրա, բ) ազատ ժամանակի ավելացումը և, համապատասխանաբար, աշխատանքային ժամանակի կրճատումն անվերջ պրոցես չէ, այն իմաստով, որ այն չի հասցնում մարդկանց բացարձակ ազատմանն աշխատանքից։ Որքան էլ բարձր լինի արտադրության մեքենացման և ավտոմատացման մակարդակը, միևնույն է, մարդկային աշխատանքը միշտ էլ առկա է լինելու։

Կուսակցության Ծրագրում ասված է.

«Կոմունիստական հասարակությունը, որը հիմնված է բարձր կազմակերպված արտադրության և զարգացած տեխնիկայի վրա, փոխում է աշխատանքի բնույթը, բայց հասարակության անդամներին չի ազատում աշխատանքից»[11]։

Դեռևս 1960 թ. երկրում ավարտվեց բանվորների ու ծառայողների անցումը յոթժամյա աշխատանքային օրվա, իսկ ածխի ու լեռնային արդյունաբերության առաջատար մասնագիտությունների այն բանվորների համար, որոնք զբաղված են ստորերկրյա աշխատանքներում՝ վեցժամյա աշխատանքային օրվա։ Առաջիկա տասը տարվա ընթացքում կիրականացվի բանվորների ու ծառայողների հիմնական մասսայի փոխադրումը վեցժամյա աշխատանքային օրվա՝ շաբաթվա մեջ մեկ հանգստյան օրվա հաշվով կամ 34—36-ժամյա աշխատանքային շաբաթվա՝ երկու հանգստյան օրվա հաշվով։

Ազատ ժամանակի ավելացումն ունի վիթխարի սոցիալական նշանակություն։ Այն հնարավորություն է տալիս ամեն մի աշխատավորի՝ ավելի բազմակողմանի դարձնելու իր հանգիստը, զբաղվելու գիտությամբ, գրականությամբ, արվեստով, սպորտով։ Այն կարևորագույն պայման է հանդիսանում մարդկանց գործունեության փոփոխության համար, նրանց բազմակողմանի զարգացման համար։

Հինգերորդ, մարդկանց աշխատանքային դաստիարակության վրա սուբյեկտիվ գործոնի ազդեցությունն իրականանում է աշխատանքում կոմունիստական կարգապահության ամրապնդմամբ։

Կուսակցական և բոլոր հասարակական կազմակերպությունները, բոլոր հարվածային գաղափարական ուժերը՝ մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, գրականությունը, արվեստը, անհաշտ պայքար են մղում նրանց դեմ, ովքեր սովորել են միայն օգտվել սոցիալիստական հասարակության անդամի մեծ իրավունքներից ու առավելություններից և անտեսում են իրենց քաղաքացիական պարտականությունները, այդ թվում ամենաառաջինը՝ աշխատելու պարտականությունը։

ՍՄԿՊ նոյեմբերյան (1962 թ.) պլենումում առաջարկություններ եղան, որ անհրաժեշտ է աշխատանքային օրենսդրության մեջ մտցնել լուրջ փոփոխություններ՝ ուղղված այն բանին, որ ծույլերը, պորտաբույծները, հարբեցողները

11 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 76։

չկարողանան բոլոր հասարակական բարիքներից օգտվել կադրային, առաջավոր բանվորների հետ համահավասար չափով։ Սովետական մարդկանց բացարձակ մեծամասնությունը պաշտպանում է այդ առաջարկը, միայն պետք է օրենսդրական ակտով վավերացնել այն։ Կյանքն ինքն է թելադրում այդպիսի օրենսդրական միջոցառումների պահանջը։ Դրանք կարևոր դեր կխաղան արտադրությունը կազմալուծողների դեմ մղվող պայքարում, կօգնեն ձեռնարկություններում ստեղծելու մշտական, կայուն կադրեր։ Միաժամանակ դրանք հսկայական դաստիարակչական նշանակություն կունենան իբրև սոցիալիստական այն կանոնի իրագործման ակնառու օրինակ, ըստ որի ով լավ է աշխատում, շատ է ստանում, ով վատ է աշխատում, քիչ է ստանում։

Մարդկանց մեջ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորման գործում սուբյեկտիվ գործոնի ունեցած դերը դրսևորվում է նաև նրանում, որ նա, հանձին կուսակցության ու պետության գործունեության, բացահայտում է աշխատանքի նկատմամբ հին վերաբերմունքի գոյության պատճառները և զանազան միջոցառումներով նպաստում այդ կարգի թերությունների վերացմանը։ Աշխատանքի նկատմամբ եղած վերաբերմունքի մեջ հնի մնացուկների գոյության պատճառները երկու բնույթի են՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ։

Օբյեկտիվ պատճառների թվին են պատկանում հետևյալ հանգամանքները։ Բազում դարերի ընթացքում սերնդից սերունդ է անցել այն գաղափարը, թե աշխատավոր մարդու համար աշխատանքը խորթ բան է։ Այդ հիման վրա առաջացել են այսպիսի ասացվածքներ. «Աշխատանքը հիմարին է սիրում», «Աշխատանքն արջ չէ, անտառ չի փախչի» և այլն։ Չնայած սոցիալիզմի պայմաններում աշխատանքը ձեռք է բերել որակապես նոր բնույթ, բայց աշխատանքի նկատմամբ հին վերաբերմունքի մնացուկները սովետական մարդկանց որոշ մասի մեջ դեռ պահպանվել են սովորույթների ու տրադիցիաների ձևով, որոնք ձևավորվել են շահագործողների համար կատարված դարավոր աշխատանքի ընթացքում։ Ընդ որում, այդ սովորույթներն ու տրադիցիաները վերաբերում են ոչ այնքան մարդկանց գաղափարական համոզմունքներին, որքան նրանց զգացմունքներին, բարքերին։ Տրադիցիայի ուժը վիթխարի է, այն խիստ պահպանողական է։ «Կապիտալիստական կարգերի սովորությունները,—գրել է Լենինը,—չափազանց ուժեղ են, այդ սովորություններով դարերով դաստիարակված ժողովրդին վերադաստիարակելը դժվարին գործ է և մեծ ժամանակ է պահանջում»[12]։ Լենինն ընդգծում էր, որ մենք պետք է աշխատենք, որպեսզի արմատախիլ անենք այդ սովորությունները, որպեսզի մասսաների գիտակցության, սովորույթի, առօրյայի մեջ մտցնենք «Բոլորը մեկի համար և մեկը բոլորի համար» կանոնը։ Այս խնդիրը հաջողությամբ կատարում են սուբյեկտիվ գործոնի բոլոր էլեմենտները՝ կոմունիստական կուսակցության գլխավորությամբ։

Այնուհետև, աշխատանքի նկատմամբ հին վերաբերմունքի պահպանման օբյեկտիվ պատճառների թվին է պատկանում նաև այն, որ մեզ մոտ, մինչև արտադրական պրոցեսների լրիվ մեքենայացումն ու ավտոմատացումը, դեռևս պահպանվում են աշխատանքի այնպիսի բնագավառներ, որտեղ համեմատաբար շատ է ձեռքի, ֆիզիկական աշխատանքը։ Բնակչության քիչ դիտակից

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 649։

մասի մեջ դա առաջացնում է հետամնաց հայացքներ աշխատանքի նկատմամբ։

Ինչ մնում է որոշ մարդկանց կողմից աշխատանքի նկատմամբ ցուցաբերվող ոչ ճիշտ վերաբերմունքի սուբյեկտիվ պատճառներին, ապա դրանց թվին պատկանում են՝ ա) նյութական շահագրգռվածության սկզբունքի խախտումները, դա առաջ է բերում այնպիսի բացասական երևույթներ, ինչպես՝ թափթփվածություն, անկարգապահություն, աշխատանքային օրենսդրության խախտումներ և այլն. բ) աշխատանքի պլանավորման և կազմակերպման գործում եղած թերությունները, որ դեռ նկատվում են մեզ մոտ և որոնք բացասաբար են անդրադառնում աշխատանքի արտադրողականության բարձրացման, գիտակցականության ու կազմակերպվածության, աշխատանքային կարգապահության վրա. գ) աշխատավորական մասսաների մեջ տարվող դաստիարակչական աշխատանքի թերությունները, որոնք առաջ են բերում այնպիսի բացասական երևույթներ, ինչպես՝ պորտաբուծություն, պարազիտիզմ, խուսափում հանրօգուտ աշխատանքից և այլն։

Ընդհանրապես թերությունների, մասնավորապես աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի մեջ եղած թերությունների դեմ մղվող պայքարում գլխավոր ուժը հասարակայնությունն է, աշխատանքային կոլեկտիվը, որը ներգործում է իր այն անդամների վրա, որոնք անփույթ վերաբերմունք ունեն ժողովրդի հանդեպ իրենց պարտականությունների մեջ։

Գաղափարական աշխատանքի գլխավոր խնդիրներից մեկը մարդկանց մեջ աշխատանքի նկատմամբ գիտակցական, կոմունիստական կարգապահության դաստիարակումն է, որի դերը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում արտակարգ մեծ է։

Մեր կյանքում, սակայն, հաճախ են պատահում կարգապահության, հաստատված կարգի խախտումներ, որոնք նույնպես տեղի են ունենում սուբյեկտիվ պատճառներով։ Այստեղ նկատի ունենք այնպիսի թերություններ, ինչպես աշխատանքի նորմավորման ու վարձատրման գործում եղած, աշխատանքային ժամանակի ու հանգստի ռեժիմի վերաբերյալ սովետական օրենքների խախտումները[13], բանվորների ու ծառայողների չհիմնավորված հեռացումները, աշխատանքի պահպանման, կենցաղային սպասարկման մեջ եղած թերությունները և այլն։

Կոմունիզմի համար մղվող պայքարում վճռականը, սովորեցնում է կուսակցությունը, աշխատանքն է և միայն աշխատանքը, հասարակության նյութական ու հոգևոր բարիքներն ստեղծող միլիոնավոր մարդկանց աշխատանքը։ Դրա համար էլ աշխատանքային բարձր կարգապահությունը նոր կյանքի համար, նոր մարդու ձևավորման համար մղվող պայքարի հաջողության անհրաժեշտ նախապայմանն է։

4

Այժմ քննենք սուբյեկտիվ գործոնի դերը կոմունիստական բարոյականության դաստիարակման գործում։

Կոմունիստական կուսակցությունն իր առջև խնդիր է դնում կոմունիզմին անցնելու պրոցեսում ամրապնդել կոմունիստական բարոյականության սկզբ-

13 1962 թ. արտաժամյա աշխատանքներն արդյունաբերության մեջ, 1961 թ. համեմատությամբ, աճել են 12%-ով։ Դա աշխատանքային կարգապահության, ռիթմիկության խախտման հետևանք է։

բունքները, ավելի բարձրացնել դրանց դերը հասարակության կյանքում, ամենակերպ ընդարձակել բարոյական գործոնների ներգործության ոլորտը և, համապատասխանաբար, փոքրացնել մարդկանց փոխհարաբերությունների վարչական կարգավորման նշանակությունը, վերջին հաշվով, կոմունիստական բարոյականության նորմերը դարձնելով հասարակության յուրաքանչյուր անդամի անձնական համոզմունքը։

Կոմունիստական կուսակցությունը, տեսականորեն ընդհանրացնելով համամարդկային բարոյական նորմերը, որոնք մշակվել են ժողովրդական մասսաների կողմից, դարերի ընթացքում շահագործողների դեմ նրանց մղած պայքարում, առավել ևս ընդհանրացնելով սովետական ժողովրդի բարոյական գիտակցության զարգացման փորձը, իր նոր Ծրագրում սահմանել է կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը։ Արդեն միայն այն, որ կուսակցությունը մեծ աշխատանք է տարել կոմունիստական բարոյականության սկզբունքների մշակման ուղղությամբ, մի բարոյականություն, որ հանդիսանում է բարձրագույն, օրինաչափ էտապ մարդկության բարոյական զարգացման մեջ, հենց միայն այդ խոսում է նոր մարդու ձևավորման համար մղվող պայքարում սուբյեկտիվ գործոնի դերի մասին։

Նոր մարդու բարոյական կերպարի վերաբերյալ ՍՄԿՊ Ծրագրի դրույթները արտահայտում են ոչ միայն մեր հեռավոր իդեալը, այլև հասարակության պահանջները սովետական յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ՝ ներկա ժամանակաշրջանում, քանի որ կոմունիզմի կառուցման մեծ խնդիրների հաջող կատարումը մեծապես կախված է մեր երկրի ժողովրդական մասսաների բարձր գիտակցականությունից, նրանց կոմունիստական ոգով դաստիարակելուց, այն բանից, թե որքան խոր կմտնի կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը յուրաքանչյուր մարդու կյանքի մեջ։

Բոլորի գիտակցությանը հասցնել աշխարհում ամենաառաջադիմական և ամենավեհ բարոյականության սկզբունքները, կարևորագույն պահանջները՝ ահա սուբյեկտիվ գործոնի բոլոր էլեմենտների, ամենից առաջ, նրա վճռական էլեմենտի՝ կոմունիստների կուսակցության կարևորագույն ֆունկցիան, խնդիրը։ Կուսակցությունը սովորեցնում է, որ բավական չէ միայն իմանալ բարոյական կոդեքսը։ Գլխավորն այն է, որ մարդիկ կոմունիստական բարոյականության կոդեքսի սկզբունքներն իրականացնեն կյանքում, իրենց ամենօրյա պրակտիկ գործունեության մեջ, հասարակության բարօրության համար կատարվող աշխատանքում։

Կուսակցության Ծրագրում որոշված են հիմնական բարոյական սկզբունքներն ու պահանջները.

— Հավատարմություն կոմունիզմի գործին, սեր դեպի սոցիալիստական Հայրենիքը, դեպի սոցիալիզմի երկրները.

— Բարեխիղճ աշխատանք հասարակության բարօրության համար. ով չաշխատի, նա չի ուտի.

— Յուրաքանչյուրի հոգատարություն՝ հասարակական ունեցվածքը պահպանելու և բազմապատկելու նկատմամբ.

— Հասարակական պարտքի բարձր գիտակցում, անհանդուրժողականություն հասարակական շահերի խախտումների նկատմամբ.

— Կոլեկտիվիզմ և ընկերական փոխօգնություն, մեկը՝ բոլորի համար, բոլորը՝ մեկի համար.

— Մարդասիրական հարաբերություններ և փոխադարձ հարգանք մարդկանց միջև՝ մարդը մարդուն բարեկամ է, ընկեր և եղբայր.

— Ազնվություն և ճշմարտասիրություն, բարոյական մաքրություն, պարզություն և համեստություն հասարակական և անձնական կյանքում.

— Փոխադարձ հարգանք ընտանիքում, հոգատարություն երեխաների դաստիարակության նկատմամբ.

— Անհաշտություն անարդարության, պորտաբուծության, անազնվության, կարիերիզմի, շահամոլության նկատմամբ.

— ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների բարեկամություն և եղբայրություն, անհանդուրժողականություն ազգային ու ռասայական անրարյացակամության նկատմամբ.

— Անհաշտություն կոմունիզմի, խաղաղության և ժողովուրդների ազատության գործի թշնամիների նկատմամբ.

— Եղբայրական համերաշխություն բոլոր երկրների աշխատավորների, բոլոր ժողովուրդների հետ[14]։

Նոր հասարակարգ կառուցողի հիմնական բարոյական սկզբունքների այս ծավալուն բնութագրությունը համոզիչ կերպով վկայում է կոմունիստական շինարարության մեջ սուբյեկտիվ գործոնի էլեմենտներից մեկի՝ բարոյական ուժերի աճման մասին։ Դրա համար էլ բարոյական կոդեքսը սովետական յուրաքանչյուր մարդու խորին համոզմունք ու սովորույթ դարձնելը ներկա ժամանակում ստանում է չափազանց հրատապ նշանակություն։

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսի մեջ նվիրվածությունը կոմունիզմին, սերը սոցիալիստական Հայրենիքի, սոցիալիզմի բոլոր երկրների նկատմամբ գրավում է հիմնական, գլխավոր տեղը, քանի որ կոմունիստական բարոյականության գլխավոր բովանդակությունը դա պայքարն է կոմունիզմի կառուցման ու ամրապնդման համար։

Կոմունիստական բարոյականության կոդեքսի այդ գլխավոր բովանդակությունը, գլխավոր պահանջը իրականություն է դառնում միլիոնավոր աշխատավորական մասսաների գիտակցական աշխատանքով։ Աշխատանքը և կոմունիզմը անբաժանելի են։ Յուրաքանչյուր աշխատավոր մարդ, մատնանշում է ՍՄԿՊ Ծրագիրը, պետք է մասնակցի այն միջոցների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ամբողջությամբ վերցրած հասարակության և առանձին վերցրած յուրաքանչյուր անհատի բարեկեցության համար։

Սոցիալիստական հասարակարգի սոցիալ-տնտեսական պայմանները՝ արտադրության միջոցների հանրային սեփականությունը, դասակարգային հակամարտության բացակայությունը, բանվորների, գյուղացիների և մտավորականության տնտեսական, քաղաքական ու հոգևոր շահերի միասնությունը մարդկանց միջև առաջ են բերում որակապես նոր հարաբերություններ՝ կոլեկտիվիզմ, եղբայրական բարեկամություն, ընկերություն, փոխադարձ հարգանք և համագործակցություն։ Կոմունիզմի էությունն էլ հենց ընկերասիրությունն է։ Այստեղից էլ բխում է կոմունիստական բարոյականության կարևոր սկզբունքը՝ կոլեկտիվիզմ ու ընկերական փոխօգնություն. մեկը բոլորի, բոլորը մեկի համար։

---

14 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 144։

Կոլեկտիվիզմի զգացումը սոցիալիստական հասարակության անդամի վեհ հատկություններից մեկն է։ Այդ զգացման մեջ օրգանապես զուգակցվում են հասարակական ու անձնական շահերը՝ կոմունիստական հասարակության մարդու բնորոշ գծերից մեկը։

Ընդհանուր բարօրության նկատմամբ հոգատարությունը զուգակցվում է կոլեկտիվի պայմաններում յուրաքանչյուր անհատի բազմակողմանի զարգացման նկատմամբ հոգատարության հետ։ Հետևաբար, սոցիալիստական հասարակության անդամը չի հակադրում իրեն կոլեկտիվին և ամբողջության մեջ վերցրած հասարակությանը[15]։ Կոլեկտիվից դուրս անհատը զրկվում է ազատ ու բազմակողմանի զարգացման հնարավորությունից։ Դեռևս Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն են նշել. «Միայն կոլեկտիվի մեջ է անհատը ստանում միջոցներ, որոնք նրան հնարավորություն են տալիս բազմակողմանիորեն զարգացնելու իր տվյալները, և, հետևաբար, միայն կոլեկտիվում է հնարավոր անձնական ազատությունը»[16]։

Կոլեկտիվիզմը սոցիալիզմի պայմաններում դառնում է ամբողջ աշխատավորական մասսաների հոգեբանության բաղկացուցիչ մասը։ Սոցիալիստական կոլեկտիվը կարևորագույն դեր է խաղում անհատի բարոյական կերպարի ձևավորման մեջ, հասարակության և իր կոլեկտիվի նկատմամբ նրա վերաբերմունքի ձևավորման մեջ։

Ամբողջության մեջ վերցրած հասարակության բոլոր անդամների, մասնավորապես կոլեկտիվի անդամների դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի հասարակական կարծիքը[17]։

Հասարակական ու անձնական շահերի դիալեկտիկական միասնության ճիշտ ըմբռնումը յուրաքանչյուր մարդու կողմից, կոլեկտիվիզմի սկզբունքի ճիշտ յուրացումը մարդկանց համար բարոյական ուժի վիթխարի աղբյուր է հանուն կոմունիզմի մղած նրանց պայքարում։

Կոմունիստական բարոյականության կոլեկտիվիզմի սկզբունքի հիման վրա ճիշտ լուծվում են այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպես՝ պարտքի, խղճի ու պատվի պրոբլեմները։ Հասարակական պարտքի բարձր գիտակցության ու մաքուր խղճի տեր մարդը դա հասարակության համար, ժողովրդի համար կատարվող անձնվեր աշխատանքի մարդ է։ Նա ձգտում է անել այն, ինչի ընդունակ է։

Կոմունիզմ կառուցողի բարոյական կոդեքսը վերաբերում է սուբյեկտիվ գործոնին։ Ավելին, նա իրենից ներկայացնում է կոմունիստական շինարարության մեջ սուբյեկտիվ գործոնի նշանակության աճման վառ արտահայտություններից մեկը։

«Կոմունիզմին անցնելու պրոցեսում,—ընդգծվում է ՍՄԿՊ Ծրագրում,—գնալով է՛լ ավելի է աճում բարոյական սկզբունքների դերը հասարակության կյանքում, ընդլայնվում է բարոյական գործոնի ազդեցության ոլորտը և հա-

15 Մենք այստեղ չենք խոսում անհատների և կոլեկտիվի միջև եղած հակասության կոնկրետ փաստերի մասին։ Այդպիսի փաստեր կան, և դրանք բացասաբար են անդրադառնում հասարակության զարգացման ընթացքի վրա։

16 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 75.

17 Կոմունիզմի կառուցման մեջ հասարակական կարծիքի դերի հարցը հանգամանորեն շարադրվում է մեր մի շարք հեղինակների աշխատություններում, օրինակ՝ А. К. Уледов. Общественное мнение советского общества, Соцэкгиз, М., 1963; М. Х. Игитханян. Сила общественного мнения, изд. «Знание», 1962 и т. д.

մապատասխանորեն նվազում է մարդկանց փոխհարաբերությունների վարչական կարգավորման նշանակությունը։ Կուսակցությունը կխրախուսի մարդկանց գիտակցական ինքնակարգապահության այն բոլոր ձևերը, որոնք տանում են դեպի կոմունիստական համակեցության հիմնական կանոնների ամրապնդում և զարգացում»[18]։

Այսպիսով, նոր մարդու ձևավորումը տեղի է ունենում երկու հիմնական, այն է՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության տակ, որոնցից ամեն մեկն իր տեղն ու նշանակությունն ունի հասարակության կոմունիստական վերափոխման ընդհանուր սիստեմում։ Ընդ որում պետք է ընդգծել, որ ոչ օբյեկտիվ պայմանները, ոչ էլ սուբյեկտիվ գործոնը առանձին վերցրած չեն կարող ցանկալի արդյունքներ տալ ժողովրդական մասսաների մեջ կոմունիստական գծեր ու հայացքներ մշակելու գործում, եթե դաստիարակվողը հանդես չի գալիս նաև որպես դաստիարակության սուբյեկտ, այսինքն՝ ինքը չի ձգտում իր մեջ մշակել կոմունիստական հայացքներ, այլ մնում է սոսկ որպես դաստիարակման պասսիվ օբյեկտ։ Մեր գրականության մեջ այդ հարցին խիստ անբավարար ուշադրություն է դարձվում։

Լինել դաստիարակության իսկական սուբյեկտ՝ նշանակում է ամբողջ գործունեությամբ ձգտել իր համար մշակել մարքս-լենինյան աշխարհայացք, կոմունիստական բարոյականության գծեր ու սկզբունքներ, դրանք դարձնել իր ներքին համոզմունքը, իր սովորույթը, իր ամենօրյա վարքի նորմը։ Լինել դաստիարակության սուբյեկտ՝ նշանակում է նաև ունենալ մարքսիզմ-լենինիզմի դիրքերից, կոմունիստական շինարարության մեծ խնդիրների դիրքերից ելնող ինքնահսկողության, ինքնագնահատման հատկություն, անձնական շահերը խստորեն զուգակցել հասարակության, կոլեկտիվի շահերի հետ, միշտ խստապահանջ լինել իր և իր ընկերների, շրջապատի մարդկանց նկատմամբ, անհանդուրժողաբար վերաբերվել նրանց թերություններին։ Լինել դաստիարակության սուբյեկտ՝ նշանակում է ձգտել և կարողանալ ինքնուրույն կերպով իր առջև նպատակներ դնել և գիտակցաբար որոշել իր գործունեության ուղղությունը։ Դա նշանակում է ձգտել ունենալ հաստատուն գաղափարական դիրքեր և իր գործողությունները խստորեն ենթարկել դրանց։

Եսասիրությունը մարդու բարոյական դեգրադացիայի նշան է։ Ն. Օստրովսկին պատկերավոր կերպով նկատել է, որ եսասերը կկործանվի ամենից առաջ։ «Նա ապրում է իր մեջ և իր համար։ Եվ եթե այլանդակված է նրա «ես»ը, ապա չկա ոչինչ, որով նա ապրի։ Նրա առաջ եսասիրության, դատապարտվածության գիշերն է։ Բայց երբ մարդն ապրում է ոչ իր համար, երբ նա լուծվում է հասարակարգի մեջ, ապա դժվար է նրան սպանել. չէ՞ որ պետք է սպանել շրջապատող ամեն ինչ, սպանել ամբողջ երկիրը, ամբողջ կյանքը»[19]։

Եսասիրության դիրքերից հնարավոր չէ ճիշտ գնահատել շրջապատի երևույթները, ընդունել ճիշտ որոշում և գործել հասարակական պրոգրեսի շահերի օգտին, հետևաբար և սեփական շահերի օգտին։

Ստեղծելով կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան, ավելի բարձրացնելով բոլոր սովետական մարդկանց քաղաքական ու աշխատանքային ակտիվությունը, վճռականորեն պայքարելով եսասիրության, պասսիվության դեմ, մեր ժողովուրդը կհասնի այն բանին, որ հասարակական շահն այլևս չի տար-

[18] ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը, էջ 542։

[19] Н. Островский. Речи, статьи и письма, 1946, стр. 72.

բերվի յուրաքանչյուր առանձին անհատի շահերից։ Կոմունիստական հասարակարգում ձեռք կբերվի անհատի ու հասարակության առավել լրիվ ներդաշնակություն։ Դա կլինի մարդկային անհատի գաղափարական-քաղաքական, բարոյական աճման նոր ժամանակաշրջան։ Միաժամանակ ավելի կմեծանա սուբյեկտիվ գործոնի դերն ու նշանակությունը հասարակական զարգացման մեջ։

М. О. Антонян

РОЛЬ СУБЪЕКТИВНОГО ФАКТОРА В ФОРМИРОВАНИИ НОВОГО ЧЕЛОВЕКА

Резюме

Буржуазные социологи, философы, политические деятели утверждают, что природа человека якобы неизменна. Опыт социалистического строительства наиболее наглядно показывает несостоятельность этой антиисторической, метафизической точки зрения.

Одной из главных задач периода развернутого строительства коммунизма в СССР является формирование нового человека—человека коммунистического общества. Она осуществляется под воздействием как объективных условий, так и субъективного фактора. Объективный фактор, коммунистическое преобразование общественного бытия—определяющее условие формирования нового человека.

Однако это вовсе не означает, что происходит автоматическое изменение природы человека под влиянием лишь объективных условий. Полагаться на автоматизм, на самотек—это значит отрицать живую диалектику взаимоотношений объективного и субъективного, сорвать дело коммунистического строительства. Объективные условия создают лишь возможность для формирования нового человека. Она превращается в действительность под решающим воздействием всех сторон субъективного фактора, особенно многогранной идеологической и организаторской деятельности партии и социалистического государства.

Ни объективные условия, ни субъективный фактор в отдельности не могут дать желаемого результата в выработке коммунистических черт и взглядов в народных массах, если воспитуемый не выступает в роли субъекта воспитания. Быть субъектом воспитания—это значит самому стремиться формировать у себя черты нового человека, обладать качеством самоконтроля, самооценки с позиций марксизма-ленинизма, с позиций великих задач коммунистического строительства.